



ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ս. ՔՈՒԱՆԶՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՑԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ¹

4. ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՑԱԼԻ ՓԼԵԱՎՈՐ ԶԲԱՂՈՒՄՆԵՐԸ

Այս մասին մեջ ես, դժբախտաբար, շատ ժլատ եմ մեզ հասած փաստերը, լրիվ կերպով ներկայացնելու համար Բուխարեստի հին հայոց ունեցած գլխավոր զբաղումները: Մինչ Մուղավիտ հայերը տակավին 15—16-րդ դարերուն նշանավոր հանդիսացան տեղվույն առևտուրին մեջ, զանազան տեսակի ապրանքներ ներածելով կամ արտածելով ու նույն ժամանակ սատարելով առևտրական միջազգային ճանապարհի մր հիմնադրմանը, որ կգրավեր Եվրոպա—Ասիա բերդ—Մուղավիտ—Ասիա կարևոր ու հսկա գիծը ու նույն ժամանակ ըլլալով նաև հայտնի աղարակապաններ ու կապաղառուներ, վա-

լաքիտ և կամ Բուխարեստի Հայոց ունեցած դերը այս առպարեզներուն մեջ ավելի համեմատ եղավ ու մեծ մասամբ մանր ու մեծաքանակ առևտուրը մնաց իրենց գլխավոր զբաղումը, ապրանքներ հայթայթելով իրենց զաղթած վայրերին և ի մասնավորի Թյուրքիային: Բուխարեստի հին հայոց մեջ Թյուրքիային իրենց հետ բերած զբաղում մըն ալ եղավ սեղանավորությունը: Սակայն անոնց մեջ դուրս հայոց մեջ կհանդիպինք նաև մեծ մասամբ բազմաթիվ արհեստավորներու, որոնք կազմած էին իրենց արհեստակցական ընկերությունը:

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսելով 17—18-րդ դարերին, Բուխարեստի մեջ կարգ մը հայ արհեստավորներու կհանդիպինք: Վալաքիտ իշխան Կոնստանտին Իրենկովանուով օրով (իշխած 1688—1714) կառուցված մարմարյա ճշխանական բաղնիքը նշանավոր էր: Այս բաղնիքի ջուրի ճանապարհները շատ ավելի մեծ վարպետությունը էին շինված, քան Պրահովայի Ֆիլիպեշտի բաղնիքին, որ կապտական Կոնստանտին Կոնստանտինովի մեծ պաշտոնատարին և որուն մասին Պաուլ Ալեպցի ճանապարհորդը մեծ հիացումով էր խոսեր: Բրըն-

կովեանու իշխանի բաղնիքին անհրաժեշտ եղող մարմարը Կ. Պոլսին էր բերվեր, իսկ անոր շինության աշխատեր էին երեք հայեր²: Նիկոլա Յորգան կրսե թե Բուդուի ֆրանչեսկաններու Արխիվը պահվող Բուխարեստի հին կաթողիկե եկեղեցվո գրությունց մեջ կհիշվի Սերին, այսինքն Շիրին անուն հայ մը, որ Վալաքիտ պալատին դերձակն էր: Բնիկ Կ. Պոլսեցի, հետո Վալաքիտ հայ դերձակներուն նախագահ կըլլա: Կմեռնի 4 սեպտ. 1739-ին կուրցած, 45 տարեկան հասակին մեջ: Ուրեմն այդ շրջանին գոյություն

1. Սկիզբը 1949 թ. III—IV և 1950 թ. I—II համարներում:

2. Ionescu-Gion, Ist. Bucurescilor, Buc.. 1899, p. 508.

ուներ նաև հայ դերձակներու «բրեսլա» (ընկերակցություն) մը, ընդիկ երկրացիներին զատ³:

18-րդ դարու վերջավորության Բուխարեստի մեջ շատ հացագործներ կային, սակայն և ոչ մեկը չէր հասներ Պապիկ (Ռումաններն արտասանությամբ Բարիկ) անուն հայուն հռչակին: Նշանավոր էր հին ժամանակ Պապիկի փուռը, ու իրմե է մնացած «Պապիկեն կոլտով»⁴ ժողովրդական ասացվածքը, այն պատճառով, որ այս հացագործը Բուխարեստի ամենարնտիր հացը պատրաստելով, տակավին առավոտուն կանուխ Բուխարեստի բոլոր բոյարները մարդիկ ղրկելով այդ կոլտովները կվերցնեին շուտով և ժողովրդյան ալ ոչ մեկ հատ չէր մնար: Այնպես որ այս ասացվածքը կգործածվեր իբրև բացասական խոսք: «Պապիկեն կոլտով»ը փնջանակեր չեղած ու չգտնված բան մը: Առաջին անգամ Պապիկի անվան կհանդիպինք 1778-ին կտակագրության ակտի մը մեջ, ուր կրավի թե Պապիկի փուռը կգտնվեր Բերբյիս եկեղեցւոյ մոտ, ծաղկավաճառներու շուկային դիմաց: 1820-ին Պապիկի փուռը կըրկին Կհիշվի Ալեքսանդրու Նիկողայի Շուցու իշխանին մեկ հրովարտակին մեջ: Վերջին անգամ ան Կհիշվի 1821-ին Կ. Իսվորանուի հուշերուն մեջ, ուր կրսե. «Երբորդ օրը Բաշ Գեորգեն առավոտուն գնաց շուկա և վերադարձավ երկու մեծ հացերով, որոնք իսկական «օխանոց» էին ու ձյունի նման սպիտակ: Հարցուցի թե ինչ հաց էր այդ, և ինձ պատասխանեց թե Պապիկեն առնված «կոլտով» է...»: Այս թվականեն վերջ, ա՛լ չի հիշվիր: Պապիկի մասին կպատմվի թե ճիշտ էր թե ինք շատ փնտռված ըլլալով առաջ սկսեր էր փող դիզել, սակայն շուտով ցամաքեր էր այդ աղբյուրը: Բոլոր բոյարները ու մեծամեծները Պապիկեն «կոլտով» կպահանջեին, իսկ ինք չէր կարող հասնիլ բոլորին: Անոնց գոհ ձգելու համար խեղճ մարդը գլուխը կշարդեր դիշեր ու ցերեկ, թե ի՞նչպես ընե, որ հացերը միայն «կոլտով» չին և նույն ժամանակ ալ անոնք օրինավոր ծանրութեան չափին պակաս չըլլան, քանի որ այդ շրջանին եթե ուսիկանները հացը ավելի պակաս գտնեին կշիռն, հացագործը իր հագուստներին մեծ դամբերով կգամբին իր խանութի դռան առաջ և վզին ալ վար կկախեին իր պակաս ծախած հացը: Մեր այս հայուն գրիտուն մեկ քանի անգամներ այսպես պատահած ըլլալով, ու-

րիշ անգամներ զերծ մնալու համար այսպիսի փորձանքներ, կատիպվեր մեկ օխային ավելի ծանր կշիռով հացեր շինելու և օխայի տեղ վաճառելու: Պապիկ կտեսներ, թե այս ձևով շարունակ կորստյան կմատնվեր, իսկ Բուխարեստի ժողովուրդն ալ իրմե շարունակ «կոլտով» կպահանջեր, ի վերջո ան ստիպվեցավ փակել իր փուռը և ազատիլ ամեն ինչէ: Իր փուռը երբեմնի իշխանական հողամասին մաս կկազմեր ու իր առջև բազմաթիւ մանր առևտրականներ ապրանքներ կծախեին: Պապիկը իր ժամանակի ընդհանուր հացագործներու արհեստակցական ընկերության «ստարոստան» էր, այսինքն ղեկավարը⁵:

Հին ժամանակ ևս ինչպես Մոլդավիո, նույնպես Վալաքիո ու Բուխարեստի մեջ, կարելի չէր որեւէ արհեստավոր իր առանձին խանութը ունենար և կամ իր մասնագիտութեան մեջ աշխատեր առանց «բրեսլա»-ի մը և կամ եղբայրության մը անդամագրված ըլլալու: Մոլդավիո հայաշատ քաղաքներուն և Տրանսիլվանիո մեջ հայերը ունեին արդեն իրենց «բրեսլա»ները, որոնք բացի արհեստակցական ընկերություն մը ըլլալն, հայ համայնքի պետերուն օգնող եղբայրություններ ալ էին: Բուխարեստի մեջ ևս հայկական «բրեսլա»ն գոյություն ունեւ ճին ժամանակներն սկսած:

Յոնեսկու-Ջիոն կրսե թե «բրեսլա»ները, այսինքն արհեստակցական ընկերությունները շատ կհարգեին իրենց կանոնադրությունները ու իրարմե առաջ անցնելու համար, անոնք կաշխատեին առավոտյան կանուխն և կմրցեին իրարու հետ առաջնությունը շահելու համար⁶:

Այս «բրեսլա»ները Բյուրբիայի «էսնաֆ»ներուն միասամբ նմանող ընկերակցություններ էին, ուր կիմբվեին ոչ միայն վարպետները, այլ նաև առևտրականները ու ղանաղան դասի պատկանող այլազգիները, և որոնք միայն այս տեսակի պարմաններու մեջ կարող էին մնալ ու աշխատիլ: Այս հանգամանքը ցույց է տըրված հստակ կերպով Բորնկովեանու իշխանի (1688—1714) տրված նամակի մը մեջ ուր, ի միջի այլոց, կրսե թե՛ օտարներն ալ բոլոր ազգերն, բրաշովներն և քիպրովիներն, հայեր ու հրեաներ առանց տոբքի չեն կարող ընդունվիլ ու ասոնք բոլորը իրենց ունեցած պարտքով կապված են երկրին զանձատան

³ N. Iorga, «Revista Istorică», 1919, p. 10.

⁴ Կնշանակե հացի ծայրի կեղեք

⁵ Caselli, «Gazeta Municipală», 1937, № 281.

⁶ Ionescu-Gion, Ist. Bucurescilor, p. 743.

հետ, և ծանոթ է, թե անոնք ի՞նչ կուտան տարին⁷։ Ամեն մեկ բրեսլա իր կարողությունները կամանակեցի բազմաթիվ մեջ պետք է դաժ զանազան օգնություն առթիվ զանազան տուրքերուն։ Այսպես, 1714-ին շատ դրամ հավաքվեցավ. ուսմեն առևարականները մասնակցեցան 574 տալերով, հրյանները՝ 150, իսկ հայերը՝ 200։ Թյուրքիո համար Դանուբի վրա նավակներ պետք էին, Բուխարեստի մեջ կառնամակներ առանց ալլեայի նավակներու տուրքը, որուն կամանակեցին առևարականները 540 տալերով, քիպրովիչները՝ 250, հայերը՝ 100, հրյանները՝ 100⁸։ Ուրեքիս պատմագիրը կնկարագրե 1775-ի 3 փետրվարին Ալեքսանդրու Իպաիլանտե իշխանի մուտքը Բուխարեստ և անոր ընդունման առթիվ կատարված շքեղ հանդիսությունները։ Իշխանը Կ. Պոլսին է, որ կուղար և մուտք կգործեր Բուխարեստ «Բեյլիքի կամուրջ»էն։ Անոր դիմավորող մեծամեծներու, զորապետի զինվորական խումբերու և բրեսլաներու բազմություն մեջ կ'իջև նսե կարգ մը հայեր իրենց բրեսլայի դրոշակով⁹։ Ըստ Իպաիլանտի իշխանի շրջանին (1775) մնացած ակտերու, հայերը նկատված էին իբրև առանձին բրեսլա մը և անոնց ղեկավարը կղատեր հայոց միջև պատահած խնդիրները։ Ավելի մեծ պատահարները կղատեր ավագ սենեկապետը¹⁰։ 1791 ղեկոնմբերի 23-ին Միհայիլ Շուցու իշխանը կհաստատե Բուխարեստի հայոց ղեկավարը իր պաշտոնին մեջ։ Իր հրամանագրին մեջ իշխանը կըսեր. «... Որպեսզի ան ղեկավարե և հոգատար ըլլա այս բրեսլային և դատե հայր հայուն միջև պատահած անհամաձայնությունները և իրենց ընտրությամբ զանոնք ուղղության բերե, իսկ ավելի մեծ խնդիրները, որոնք պիտի չկարողանան լուծվիլ ղեկավարին կողմն, ղրկվին իմ իշխանության սենյակը. և այսպես, թե՛ բրեսլան և թե՛ անոր ղեկավարը շարունակեն իրենց հին սովորությամբ, ինչպես որ առաջ ալ շարունակեի էին ըստ իշխանական հրովարտակներու տված առանձնաշնորհումներու և որոնք տեսանք իշխանական դահլիճի մատյաններուն մեջ, և որուն համար կհրամայեմ ձեզ բոլորիդ, որ հայկական դավանանքի կպատկանիք, ճանչնաք ձեր

ղեկավարը, ու անհրաժեշտ եղող հնազանդությունը և ունենդությունը ցույց տաք ունոր»։ Ինչպես կերևի սույն հրամանագրի պարունակովն, Բուխարեստի հայերը արթին վաղուց է, որ ունեին իրենց ընկերակցություններն ու ղեկավարները։ Այնպես որ, Միհայլ Շուցուի այս հաստատումը հին կանոններու վերանորոգում մըն էր միայն¹¹։

1794-ին, հայկական բրեսլայի անդամները դիմելով Ալեքսանդրու Կոնստանտին Մորուզի իշխանին, կխնդրեին, որ իրենց ղեկավարը հիվանդ և ծեր ըլլալով նորը նշանակվի, հանձին Սարգիս անուն հայուն և կրկին կխնդրեին, որ հրովարտակով մը հաստատեի զայն իր պաշտոնին։ Մորուզի իշխանը կհաստատեի¹²։ Այս շրջանին, Բուխարեստի մեջ 40 հայ հարկատուներու կհանդիպինք, որոնք կրկին կձանչվին վերահիշյալ իշխանին հրովարտակով, իբրև առանձին բրեսլա։ 1800—1801 թվականներուն «յորդանջի բաշի» հայ մը կհիշվի, որ իշխանին պալատին վերամակագործն էր։ Մորուզի իշխանը, օգտվելով այս առիթին, որիչ հայ վերամակագործներու ալ կարտոնե մտնել այս արհեստի բրեսլային ներս ու կշնորհե առանձին աշխատանոց ունենալու իրավունք, առարկելով որ անոնք իր երկրին մեջ աշխատելով զարկ պիտի տան սույն արհեստին և աշխատավորները շատնալով կյանքն ալ պիտի սկսի աժաննալ։ Իշխանը, այսպիսով, կմեծեց վերահիշյալ բրեսլայի ավագ անդամներու իրեն հղած խնդրագրերը, ուր անոնք կառաջարկեին հայերուն համար արգիլել աշխատանոց բանալը և իրենց բրեսլային ներս մուտ գործելը։ Այս շրջանին իբրև «յորդանջի» կհիշվին Սարգիս Յուսուպ, Մարին Սարգիսով և Ասար Հուրուզով Արմենուկ հայերը¹³։

1813 հունվար 25-ին Կարաջա իշխանը, վերանորոգելով վերամակագործներու բրեսլայի հրովարտակը, դարձյալ մի քանի ուղղումներ կընե ըստ իր բաժին «ժամանակի պահանջներուն համեմատ»։ Ինքես կարտոններ ալլազգի վարպետներուն, որպեսզի անոնք ևս կարողանան խանութ բանալ այս արհեստի բրեսլային շարքին, բայց զանոնք պարտավորեցնելով, որ հնազանդին բրեսլայի մեծին։ «Բերքեր»ներու

7. N. Iorga, Ist. Comertului Românesc, Vol I, p. 307.

8. Ionescu-Gion, Ist. Bucureștilor, p. 454.

9. Նույն, p. 395.

10. V. A. Urechea, Ist. Românilor, II, p. 193

11. V. A. Urechea, Ist. Românilor, tom. II, p. 295.

12. Նույն, tom V, p. 174.

13. V. A. Urechea, Ist. Românilor, Buc., 1897, tom VIII, p. 100—102.

Բրեսլային մեջ ևս այլադպիսիներ կընդունվեին, իսկ «շելար»ներու և «կուրելար»ներու, այսինքն ձիու կազմածք շինող բրեսլաներու մեջ օտարներ իրավունք կունենային միայն իբր ծառայող աշխատելու: «Բույաջի»ներու, այսինքն ներկարարներու բրեսլային մեջ ևս կընդունվեին այլազգիներ¹⁴: 1819 փետրվար 15-ին Ալեքսանդրու Շուցու իշխանը կ'ընկերացնէ Հայկական բրեսլայի նոր դեկավարը¹⁵: Իսկ 1820 սեպտեմբեր 22-ին, նույն իշխանը, ընդառաջ երթալով հայոց դիմումին, անոնց բրեսլան վերակազմվելու համար իր կողմն առանձին իշխանական գրությամբ կ'ավերացնէ նոր կանոնադրություն մը: Ինչպես կ'երևի հայոց կողմն առաջարկված և իշխանին կողմն վավերացված սույն կանոնադրության պարունակությունն, հայկական ընկերակցության անդամները հավանաբար գոհ չըլլալով միայն իրենց դեկավարին տեսած առանձին դատաստաններին, որոշեր էին նախագահին կցել նաև ուրիշ խնամակալ անդամներու թիվ մը, և առհասարակ ամեն ինչ որոշեր էին կատարել տալ միայն այդ բոլորի խորհրդակցությամբ: Նոր կանոնադրությունը կ'պարունակեր հետևյալ կետերը. 1) Հայկական ամբողջ բրեսլան հավաքվելով, բազմություն ժողովով պիտի ընտրէ չորս խնամակալներ (թաղականներ), որոնք տեղվույն ամենահավատարիմ բնակիչներին պետք է ըլլան և այդ չորսն ալ պիտի ընտրեն դեկավար մը («ստարոստ») և այդ բանը պետք է որ տեղեկացնեն իշխանական դանձատան: 2) Այս չորս խնամակալները դեկավարին հետ միասին պետք է որ երաշխավոր ըլլան իշխանական գանձատան առաջ, որ ճիշտ պայմանաժամին պատասխանատու են հայկական բրեսլայի վրա ինկող տուրքերու մասին: 3) Այս ընտրվածները, դեկավարին հետ միասին, պետք է որ լավ վարդապետներ բրեսլայի մեջ պատահած առհասարակ ամեն ինչ, շարունակելով կետ առ կետ հին սովորությունները: 4) Դեկավարը իրավունք պիտի չունենա ո՛չ մեկ տեսակի պատահար լուծելու առանց խնամակալներու գիտություն, քանի որ բոլորն ալ պատասխանատու են բրեսլայի մեջ կատարված որեւէ պատահարի մասին: 5) Հայր հայուն հետ դատվելու պարագային, բոլոր այս հինգ հոգիները պետք է քննեն և իրավացի վերադառնան սահմանն (դատաստան), իսկ որեւէ մեկուն կողմն եղող դժգոհությունը պետք է որ ներկայացնեն իշխանական դիմանառան առաջ, հին սովորությունն նման»¹⁶:

Ռումեն Ակադեմիան պահված 1820 թվականով ձեռագրի մը մեջ, Բուխարեստի մեջ կ'հիշվի «Կոմպանիա Արմենիոն»ը, այսինքն Հայկական խմբակցությունը: 1821 թվի համար զետեղված երկրի բոլոր արհեստակցական և առևտրական խմբակցություններու մեջ, որոնք դրված են ըստ նահանգներու և քաղաքներու ու իրենց վճարելի պարտքերով, «Հայկական խմբակցությունը» կ'ընկնէ 15-րդ տեղը¹⁷:

1821-ին Բուխարեստի մեջ կ'գտնենք ռումանացի արհեստակցական ընկերության 187 անդամներու դիմաց 37 անդամներ հայ արհեստակցականի պատկանող: 1832 թվին առևտուրի մատուցանի մեջ նշանակված 3.269 պատենտավոր առևտրականներու և արհեստավորներու շարքին, Բուխարեստի ոստիկանատան մեջ կ'գտնենք 111 պատենտավոր հայեր, որոնք հետևյալ բրեսլաներուն մեջ էին¹⁸. 3 հոգի լիսակայի ապարանք ծախող, 1 լիսակայի մեծաքանակ ապարանք ծախող, 21 մանուֆակտուրայի ապրանքներ ծախող, որոնց մեջ նաև բուստեր (մարջան) և մետաքսեղեն, շրջում վաճառեղեն ու զրոխջաչի, այսինքն շալիք և գլխակապեր վաճառող, 1 փերեզակ, 6 սեղանավոր (սարաֆ), 2 թռչնավաճառ և անասնավաճառ, 2 նպարավաճառ, 7 թյուրյունչի, 1 չիրուխչի, 17 սրճագործ, 1 մսագործ, 1 ձկնավաճառ, 2 կիր, կանաչեղեն ու երշիկեղեն վաճառող, 1 կասյառալու, 9 ոսկերիչ և ժամագործ, 3 կոշիկավոր, 1 բամբակագործ, 2 վերմակագործ, 2 հացագործ, 1 խմորեղեն պատրաստող, 1 մոմագործ, 10 դերձակ, 11 «Իրրիշիմջի» (մետաքսյա զերծաններ վաճառող), 2 սալիքիչ, 1 ձիու կաշեղեն վաճառող, 1 երկաթագործ, 1 փամփրջատագործ: Բրեսլայի այս անդամները իրենց առևտուրը կ'ընեն հետևյալ վայրերու մեջ. — Պլոնեշտ՝ 10, Պիտեշտ՝ 7, իսկ մայրաքաղաքի փողոցներին, Օլարի փողոց՝ 22, Արմեն՝ 9, Ս. Գեորգե վեքե՝ 8, Կուրտեա վեքե՝ 7, Մրնտուպեսա՝ 8, Կայմատա՝ 5, Սկաուն՝ 5, Ս. Դոմիտրու Նուլ՝ 3, Պոպա Ռուսու՝ 3, Անտիմ՝ 3, Հանուկ Մանուկ՝ 2, Սիլվեստրու՝ 2, Ռեզվան՝ 2, Էկատերինա՝ 2, Ս. Նիկոլան՝ 2, Դոբրոտեասա՝ 1, Բիսերիկա Ամզե՝ 1, Հանուկ Լույ Զամֆիր՝ 1, Դուզեմկու՝ 1, Ռադուվոդը՝ 1, Ս. Գեորգե Նուլ՝ 1, Դոմանա Բըլաշա՝ 1, Ստալկու, Պոպա Գիցու, Դելեա վեքե՝ 1:

(Շարունակելի)

¹⁴. Նույն, том X, В. р. 220—221.

¹⁵. Նույն, том, XII, р. 992.

¹⁶. Նույն, том. XII, р. 393, 4 Cod. XCIII, fila 183.

¹⁷. Ion Bianu, Catalogul manuscriptelor românești, vol. I, p. 545

¹⁸. Inceputurile edilitare. 1830—1883, Buc. 1936.